

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴԴԵՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

Հ/Հ	Խնդիրը	Նպատակը
1	Մարզում ապահովել պետական և հասարակական կյանքում կանանց մասնակցության մասին վիճակագրական տվյալների հավաքումը, վերլուծությունը և տարածումը	Գենդերային մոտեցումների արմատավորում մարզի տնտեսական, Սոցիալական և քաղաքական ոլորտներում
2	Ապահովել հատուկ միջոցառումներ կանանց 30% ներկայացվածությունը մարզի համայնքապետարաններում	Համայնքապետարաններում կանանց թերի ներկայացվածության հաղթահարում և սոցիալական համերաշխության ամրապնդում
3	Մարզում ապահովել հավասար արժեքի աշխատանքի դիմաց հավասար վարձատրության ստանալու կանանց և տղամարդկանց իրավունքի ամրագրումը և կիրառումը	Գենդերային անհավասարության հաղթահարում, սեռի հատկանիշով խտրական դրսևորումների կրճատում
4	Մարզում նպաստել աշխատատեղերի ստեղծմանը՝ հաշվի առնելով տնտեսության առավելապես կանանց զբաղվածությամբ ճյուղերի գենդերային կողմերը	Մարզում կանանց գործազրկության Մակարդակի իջեցում և աղքատ բնակչության կազմում կանանց տեսակարար կշռի կրճատում
5	Մազում աջակցել կանանց ձեռնարկատիրական գործունեությանը և խթանել կանանց տնտեսական նախաձեռնություններին ուղղված վարկային ծրագրերը՝ հատկապես գյուղական վայրերում	Մարզում կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնում, աղքատության հաղթահարում և շուկայական հարաբերություններում մրցակցային միջավայրի ձևավորում
6	Մարզում ընդլայնել կանանց մասնակցության հնարավորությունները գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում	Մարզի գյուղական բնակավայրերում կանանց աշխատանքային և կենցաղային պայմանների բարելավում և եկամուտների ավելացում
7	Մարզի գյուղական շրջաններում ապահովել կանանց որակյալ բուժօգնության տրամադրումը	Մարզում բժշկական ժամանակակից կենտրոնների կառուցում և հագեցում
8	Բարելավել մարզում կանանց վերարտադրողական առողջությանն ուղղված միջոցառումները	Մարզի ամբուլատոր և ստացիոնար ծննդօգնության բուժհաստատությունների բարեկարգում

9	Նվազեցնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակի տարածումը մարզում, կանանց իրազեկման և գիտելիքների բարձրացման միջոցով	ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակի տարածման վերաբերյալ կանանց տեղեկացվածության բարձրացում
10	Աջակցել սեռի հատկանիշով բռնության և մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ զոհերի հետ աշխատող սոցիալական հաստատությունների գործունեության գիտամեթոդական ապահովմանը	Մարզում սեռի հատկանիշներով բռնության և մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարին ուղղված ծրագրերի և միջոցառումների մշտադիտարկում
11	Մարզում աջակցել սեռի հատկանիշներով բռնության և մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարի ուժեղացմանը՝ ՁԼՄ-ներում հիմնախնդիրների լուսաբանման միջոցով	Մարզում առանց բռնության մշակույթի ձևավորում
12	Մարզում նպաստել աշխատատեղերի ստեղծմանը՝ հաշվի առնելով տնտեսության առավելապես կանանց զբաղվածության ճյուղերի գենդերային կողմերը	Մարզում կանանց գործազրկության մակարդակի իջեցում և մարզի աղքատ բնակչության կազմում կանանց տեսակական կշռի կրճատում
13	Մարզում բարելավել գյուղատնտեսության և գյուղական ենթակառուցվածքները, ղնդլայնել կանանց մասնակցության հնարավորությունները գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործնթացներում	Մարզի գյուղական բնակավայրերում կանանց աշխատանքային և կենցաղային պայմանների բարելավում և եկամուտների ավելացում